ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՐԴԻ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

(ԸՍՏ Ե. ՉԱՐԵՆՑԻ «ՄԱՀՎԱՆ ՏԵՍԻԼ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ)

Ի. Ս. ԱՍՈՅԱՆ

Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի միջնակարգ դպրոցի
հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

19-րդ դարավերջը և 20-րդ դարասկիզբը հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական ժամանակահատվածն էր՝ լինել-չլինելու սրտմաշուկ, հուսաբեկ հարցականներով: Ինքնազոհաբերումը դառնում էր գոյության կերպ, լինելիության միակ ճանապարհը: Եվ հայ ժողովուրդը վերստին հաստատեց սևակյան եզրահանգումը, թե «սխրանքն սկսվում է լոկ այնտեղ, ուր վերջանում է ամեն մի հնար»: Ստեղծված իրավիճակի «ոգեկան» (Ե.Չարենց) «պատասխանատուն» հայ մտավորականն էր, հատկապես գրողն ու բանաստեղծը: Թումանյան, Սիամանթո, Տերյան, Բակունց և էլի ու էլի որիշներ, որոնք իրենց գոյությունն իմաստավորում էին ոչ միայն կոնկրետ գործողություններով, այլև, որը թերևս ավելի կարևոր էր, «հրեղեն խոսքով» (Ավ. Իսահակյան): Եվ նրանց մեջ էր Ե.Չարենցը, որի ստեղծած գրականությունն իր թեմատիկ բազմազանությամբ նորի փնտրտուք էր, իր և իր ժողովրդի անցած ճանապարհի վերագնահատում, ապագայի հրճվախիտ տեսլական՝ մռայլախոհ մտորումներով վերջաբանված:

Մի օրհասական, հուսահատ պահի ծնունդ է «Մահվան տեսիլ» բանաստեղծությունը (այդ վերնագրով ևս երկու այլ ստեղծագործություններ ունի)՝ գրված 1920թ. դեպի Հայաստան թուրքերի կատարած արշավանքների անմիջական ազդեցության տակ: Հայրենասիրական հզոր լիցք ունեցող այս ստեղծագործությունը ոչ միայն կոնկրետ պատմական իրադարձության արձագանք է, այլև հավերժ արդիական զգացողություն, որը լավագույնս արտահայտվեց Արցախյան ազատամարտում և ապրիլյան քառօրյայի ժամանակ: Հայրենիքի կորստյան մտապատրանքը ծնում է ինքնազոհաբերման հոգեբանություն բոլոր ժամանակներում:

Նման ստեղծագործությունների ուսուցումն ավագ դպրոցում ոչ թե ինքնանպատակ, պարզապես ծրագրով նախատեսված հերթական դաս պետք է լինի, այլ իրական, շոշափելի հայրենասիրության ներարկում, որը պետք է դառնա յուրաքանչյուր հայ մարդու էության ու արյան հիմնական բաղադրիչը:

Այստեղ փորձել ենք նոր մեթոդների օգնությամբ ավագ դպրոցի աշակերտներին հաղորդակից դարձնել բանաստեղծի տառապագին ապրումներին՝ նրանց դաստիարակելով հայրենասիրության, ինքնանվիրումի՝ մարդուն վեհացնող ու բարձրացնող ոգով:

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ - Ե.Չարենց. «Մահվան տեսիլ»

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Ա. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ

1. Ստեղծագործության հանգամանալից ընթերցում:

2. Բանաստեղծության թեմայի և բովանդակության ընկալում:

3. Բանաստեղծության պատկերային և լեզվաոճական համակարգի առանձնահատկու-թյունների բացահայտում և մեկնաբանություն:

4. Բանավոր խոսքի զարգացում:

5. Ժամանակաշրջանի և գրական ստաղծագործության կապի բացահայտում:

6. Բանաստեղծության արդիական հնչեղության ընկալում:

Բ. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

1. Մեկնաբանել ստեղծագործության գաղափարական բովանդակությունը:

2. Ցույց տալ պատկեր-սիմվոլ (խորհրդանիշ) կապը:

3. Գտնել պատկերավորման-արտահայտչական միջոցները:

4. Գտնել բանաստեղծ-պատմություն կապը:

5. Արժևորել հայրենասիրական ինքնանվիրումը:

ԴԱՍԻ ՏԻՊԸ - Նոր նյութի հաղորդման դաս;

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ - Դասագիրք, տետր, համակարգիչ:

ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ- Ե.Չարենցի գրքերը, քարտեզ, լուսանկարներ, Չարենցի սարյանական դիմանկարը, նյութեր Չարենցի ստեղծագործությունների վերաբերյալ:

ՆԵՐԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊ - ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. Սիամանթո, Վ.Տերյան, Հովի. Թումանյան, Եղիշե, Պ.Դուրյան:

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊ – ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. Առաջին համաշխարհային պատերազմը և հայ ժողովուրդը: Հայ-թուրքական հարաբերությունները 1920-ական թվականներին:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ – Ինքնանվիրում, սիմվոլիզմ(խորհրդապաշտու-թյուն), սիմվոլ(խորհրդանիշ), այլաբանություն, տեսիլ, հայրենասիրություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐ - «Մտագրոհ», «Պրիզմա», «Դասախոսություն», «Կենսագրական քարտեզ»

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ ՝

1.ԽԹԱՆՈՒՄ - Կատարել հին դասի հարցում, հարցերով ամփոփել և անցնել նոր նյութին՝օգտագործելով «Մտագրոհ» մեթոդը:





Գրատախտակին գրել ՝ Ի՞նչ է ինքնանվիրումը, Ի՞նչ է տեսիլը:

Գրանցել աշակերտների պատասխանները.

1.Ի՞նչ է ինքնանվիրումը:

2.Մեզ ծանո՞թ է« մահվան տեսիլ» արտահայտությունը:

3.Թվարկե՛լ տեսիլ բառի հոմանիշները:

2.ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ - Դասախոսության ձևով ներկայացնել պատմական ժամանակաշրջանը՝ նախօրոք գծելով մի սանդղակ՝ ցույց տալու Ե. Չարենցի մասնակցությունը և արձագանքը պատմական իրադարձություններին. աշակերտների օգնությամբ լրացնել սանդղակը՝ հեղինակի կենսագրական քարտեզը.

1897	1914-1915	1917-1918
1920 Ծնունդը Թուրք.արշավ. (Կարս)	Մասնակց.պատերազմին (Քանաքեռ - Վան)	Ռուս.հեղափոխ. Սարդարապատ (Հայաստան)
«Չարենց-նամե» «Դանթեական առասպել»	«Սոմա»	«Մահվան տեսիլ»
	«Վահագն»	«Ամբոխն. խելագարվ.»

Աշակերտները ուսուցչի դասախոսության արդյունքում լրացնում են նաև չլրացված թվականը՝ 1920-ը. գրում են պատմական

գործողությունների տպավորության տակ գրված բանաստեղծության վերնագիրը՝ «Մահվան տեսիլ»՝ գրված 1920 թ. հոկտեմբերի 6-ին: Թուրքիան 1920 թ. աշնանը հարձակվում է Հայաստանի վրա: Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ընկնում են Օլթին, Սարիղամիշը, Իգդիրը և բանաստեղծի հայրենի քաղաք Կարսը: Նոյեմբերի սկզբին թուրքերը մտնում են Գյումրի:Թվում է՝ կործանվում է ամեն բան, եկել է Հայաստանի վերջին օրը: Այս հուսահատության ծնունդն է «Մահվան տեսիլը»: Պատկերը լրացնելու համար պետք է բերել մեկ փաստ ևս. 1920թ. հայոց բանակի ձախորդություններից հուսահատ՝ զորավար Միքայել Մազմանյանը Կարսում ինքնասպանություն գործեց զորքի առաջ՝ իր հերթին դառնալով իր երկրի վերջին զոհը:

Բանաստեղծության գաղափարական բովանդակությունը հասկանալու համար ուսուցիչը նախօրոք խմբերի բաժանված աշակերտներին (5 խումբ) հանձնարարում է ծանոթանալ տեքստին և կատարել հետևյալ աշխատանքները.

1-ին խումբ - գտնել պատկերավորման-արտահայտչական միջոցները՝ համեմատություն, փոխաբերություն, մակդիր, անձնավորում, հռետորական հարց, հանգավորում, հակադրություն և գրել գրականության տետրերում:

2-րդ խումբ – ցույց տալ սիմվոլ-պատկերները և գրել գրականության տետրերում՝ կախաղանի երկնուղեշ փայտեր, պիրկ, գորշ պարան, լքված թավջութակի ձգված լար, կքած փայտեր, անհուր, անկրակ իրիկնաժամ, լուռ քաղաք, անստվեր լռություն, գորշ կքած խանութներ, գորշ մարդիկ, հալածական ուրու, տեսիլ, մարող ու մարմրող իրիկուն. մահվան տեսիլն է (նաև բացատրել սիմվոլիզմը):

3-րդ խումբ - հիշել Սիամանթոյի «Մահվան տեսիլքը», Վ.Տերյանի «Երկիր Նաիրին»,

Հովհ.Թումանյանի «Հոգեհանգիստը». համեմատել Սիամանթոյի ողբերգական տեսիլները, Տերյանի՝ հեռավոր արշալույսների,մահվան և հարության տեսիլ-շարքերը, Թումանյանի ներքին տանջալի խոհը՝ մեր բախտի,մեր որբերի, մեր ժողովրդի վաղվա օրվա ու գալիքի մասին ,Չարենցի անամոք վշտի, հոգեկան դրամայի հետ:

4-րդ խումբ - կապ հաստատել պատմական դեպքերի և բանաստեղծության գաղափարի միջև, գտնել այլաբանությունը. «կարոտի

լարը», որ հին վախն է հայրենիքի ճակատագրի համար,պրկված է մինչև վերջ՝ «վերջին քնար»:

5-րդ խումբ - բանաստեղծությունը բաժանել երկու մասի, համեմատել և հակադրել միմյանց:

Քննարկվում են աշխատանքները, կատարվում են լրացումներ:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ - Այս փուլում հարցումը կատարվում է ուղղորդող հարցով՝ ելնելով կատարված աշխատանքներից.

1. Ո՞րն է բանաստեղծի քայլը:

Աշակերտները մաս-մաս կկարդան բանաստեղծությունը և կբացատրեն, որ հուսահատական և օրհասական վայրկյանին բանաստեղծի երևակայության մեջ հայտնվում է մահվան՝կախաղանի տեսիլը: Թանձրացող գիշերվա հետ ամեն ինչ դառնում է «գորշ»՝ պարանը, մարդիկ, խանութները, ու «անկրակ», կախաղանի «երկնուղեշ փայտերի» շուրջ հավաքվում են «գորշ» մարդիկ և չգիտեն՝ ինչ են ուզում, մինչդեռ պիրկ պարանը սպասում է կախվողի: Գուցե այդ մարդի՞կ էլ են պատասխանատու հայրենիքի բախտի համար, և առաջին հերթին ինքը՝ որպես բանաստեղծ-քաղաքացի, պարտավոր է ճանապարհ ցույց տալ՝ հիշեցնելով Նաիրի երկրի ողբերգիկ վիճակը՝ «անհույս», «անլույս», «անկրակ»:

Ճգնաժամային պահին , երբ թվում է՝ փրկություն չկա, ինքնազոհ բանաստեղծը ոտքի է կանգնում՝ դառնալու վերջին զոհը, կախաղանից կախված վերջին օրորվող մարմինը, քանի որ հայրենիքի փրկությունը զոհ է պահանջում, և այդ զոհը ինքն է լինելու:

Աշակերտները եզրակացնում են, որ դա յուրաքանչյուր քաղաքացու՝ հայրենիքին ծառայելու պարտականությունն է, որը «լուսապսակ» ապագայի խորհուրդ ունի իր մեջ:

Կարելի է հիշեցնել նաև 5-րդ դարի պատմիչ Եղիշեի խոսքերը. «Մահ ոչ իմացեալ մահ է , մահ իմացեալ՝ անմահութիւն» և Պ. Դուրյանի «Իմ ցավը» բանաստեղծության վերջին քառատողը.

Հեք մարդկության մեկ ոստը գոս՝
Հայրենիք մը ունիմ թշվառ.
Չօգնած անոր՝ մեռնիլ աննշան,
Ո՜հ, այս է սոսկ ցավ ինձ համար:

Նշված աշխատանքների արդյունքում աշակերտների միջոցով կազմել պրիզմա և առաջին ու վերջին բառերով կազմել նախադասություն:



Կատարվում է նաև արդիականացում՝ կապ ստեղծելով մեր հայրենիքի սահմաններում տիրող իրավիճակի, ժողովրդի հավաքական կերպարի և հայ քաջ զինվորի սխրագործությունների հետ:

ԱՆԴՐԱԴԱՐՁ - Հարցադրումներ.

1. Ո՞րն է բանաստեղծությունը գրելու շարժառիթը:
2. ՈՒ՞մ օրինակով է վերնագրել այն:
3. Ինքնանվիրման էությունը ո՞րն է:

ԳՆԱՀԱՏՈՒՄ - Կատարել պատճառաբանված գնահատում և ինքնագնահատում:

ՏՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ - Հետազոտական աշխատանք.

1. Գտնել «մահ« նշանակող բառերն ու արտահայտությունները:
2. Գտնել բառային կրկնությունները, բացատրել:
3. Գրել շարադրություն՝ ընտրելով տրված թեմաներից որևէ մեկը.

ա/«Անհատն ու հայրենիքը «Մահվան տեսիլ» բանաստեղծության մեջ»

բ/ «Ինչո՞ւ ես այդպես դաժան, ապրի՛լ»

գ/ «Դու հաղթանակ ես բերում, մայի՛ս»

դ/ «Ես եմ վաղվա քո զինվորը, հայրենի՛ք»

3. Սովորել պատմել, անգիր՝ ցանկությամբ:

Բանալի բառեր՝ *Չարենց, պատմություն, գրող, բանաստեղծ, ճանապարհ, աշակերտներ, տեսիլ, հայրենիք, լուսապսակ, գաղափարական բովանդակություն:*

MODERN METHODS OF TEACHING LITERATURE AT HIGH SCHOOL BY THE EXAMPLE OF YEGHISHE CHARENT'S "THE VISION OF DEATH" POEM

I. S. ASOYAN
Teacher of the Armenian Language and Literature
at the Secondary School of Akunk, Gegharkunik
Region

The article presents an example of teaching a particular poetic material. The author of the article made an attempt to reveal the ideological content of the poem by the use of various linguistic means. Peculiarities of teaching the topics are presented through modern teaching methods.

СОВРЕМЕННЫЕ МЕТОДЫ ПРЕПОДАВАНИЯ ЛИТЕРАТУРЫ В СТАРШЕЙ ШКОЛЕ (НА ПРИМЕРЕ СТИХОТВОРЕНИЯ ЕГИШЕ ЧАРЕНЦА "ВИДЕНИЕ СМЕРТИ")

И. С. АСОЯН
Учительница армянского языка и литературы
села Акунк Гегаркуникского марза

В статье представлен конкретный пример обучения поэтическому материалу. Автор статьи предприняла попытку выявить идейное содержание стихотворения посредством использования различных языковых средств. Особенности обучения темы представлены современными методами преподавания.